

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի նիստի

#### 2. 07.2015թ. քաղաք Վանաձոր

Նիստը վարում էր խորհրդի նախագահ, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, նիստին մասնակցում էին երիտասարդական խորհրդի 26 անդամներից 17-ը, ներկա էին ՁԼՄ ներկայացուցիչներ: Օրակարգում ընդգրկված էր 7 հարց:

Օրակարգի առաջին հարցի համաձայն՝ ներկայացվեց Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կողմից անցած ժամանակահատվածում կատարված աշխատանքները, անդրադարձ կատարվեց երիտասարդական խորհրդի կողմից հունիսի 1-ի առթիվ Վանաձորի մանկատուն կատարած այցին: Ապա երիտասարդական խորհրդի համայնքների ներկայացուցիչները ներկայացրեցին համայնքերում կատարված աշխատանքների մասին: Համայնքների մեծ մասում՝ հատկապես քաղաքային համայնքերում, ձևավորվել են երիտասարդական խորհուրդներ, կազմավորվել աշխատանքային խմբեր, երիտասարդներն սկսել են ավելի ակտիվորեն մասնակցել համայնքի հասարակական կյանքին: Սակայն մարզի գրեթե բոլոր համայնքերում առկա է մշտապես գործող երիտասարդական կենտրոններ ունենալու խնդիր, որտեղ կարող են հավաքվել տարածաշրջանի ակտիվ երիտասարդները, կազմակերպել միջոցառումներ, կյոր-սեղաններ, սեմինարներ, մշակել և իրականացնել համայնքների երիտասարդական քաղաքականությունը:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Ստեփանավան համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ, <<Ստեփանավանանը ՀՀ 2015թ. երիտասարդական մայրաքաղաք>> ծրագրի համակարգող Նազելի Ավագյանը՝ զեկուցելով մինչ օրս <<Տարվա երիտասարդական մայրաքաղաք>> ծրագրի շրջանականերում Ստեփանավանում կատարված միջոցառումների և ծրագրերի մասին:

Օրակարգի երրորդ հարցը կրկին վերաբերում էր համայնքներում երիտասարդական կենտրոններ բացելու կարևորությանը: Ալավերդու պետական հատվածի ներկայացուցիչ Արթուր Վարոսյանն առաջարկեց ըստ առաջնահերթության համայնքներում ստեղծել երիտասարդական կենտրոններ և ներկայացրեց Ալավերդի համայնքի երիտասարդական կենտրոնի գործունեության համար Ալավերդու երիտասարդների կողմից մշակված նախնական մոդելը: Երիտասարդական կենտրոնը կունենա տարբեր խմբակներ՝ երգի, պարի, ինտելեկտուալ խաղերի, թատերական և այլն, կկազմակերպվեն տարբեր միջոցառումներ, ներկայացումներ, համերգային ծրագրեր և վաճառված տոմսերի գումարով հնարավոր կլինի որոշակիորեն լուծել երիտասարդական կենտրոնի գործունեության ծախսերը: Համայնքներում երիտասարդական կյանքի աշխուժացմանը նպաստելու, ակտիվ երիտասարդների ներուժը համախմբելու տեսանկյունից համայնքներում երիտասարդական կենտրոններ ստեղծելու խնդիրը առաջնահերթ

համարեցին նաև Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան համայնքների ներկայացուցիչները:

Օրակարգային 4-րդ հարցը հանվեց նիստի օրակարգից՝ հարցն առաջարկողի հարգելի բացակայության պատճառով:

Սպիտակ համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Գրետա Բաղրամյանն օրակարգի 5-րդ հարցի շրջանակներում առաջարկեց Լոռու մարզի համայնքների երիտասարդության միջև կապ և համագործակցություն հաստատելու նպատակով կազմակերպել մարզային միջոցառումներ, իրականացնել համատեղ ծրագրեր:

6-րդ հարցը վերաբերում էր Լոռու մարզում ՀՀ Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության 5.6. կետին համաձայն՝ մարզում մարզային երիտասարդական ամենամյա մրցանակաբաշխություն անցկացնելուն՝ երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների ակտիվությունը բարձրացնելու, երիտասարդական ոլորտում կատարված աշխատանքները գնահատելու նպատակով տարվա ընթացքում երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի ոլորտում լուրջ ներդրում ունեցած երիտասարդներին կամ երիտասարդական կազմակերպություններին ներկայացնելով տարբեր կարգի պարգևների, մրցանակների և պատվոգրերի շնորհման: Առաջարկը եղավ Ստեփանավանի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ, Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի քարտուղար Նազելի Ավագյանի կողմից:

Օրակարգի 7-րդ հարցի համաձայն առաջարկվեց Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամների համար կազմակերպել համատեղ միջոցառումներ և էքսկուրսիաներ Լոռու մարզի տարածքում:

Որոշվեց՝

- Լոռու մարզի համայնքներում ըստ առաջնահերթության ստեղծել երիտասարդական կենտրոններ:
- Մարզային երիտասարդության միջև համագործակցություն հաստատելու նպատակով իրականացնել մարզային համատեղ ծրագրեր:
- Լոռու մարզում երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների ակտիվությունը բարձրացնելու, երիտասարդական ոլորտում կատարված աշխատանքները գնահատելու նպատակով անցկացնել մարզային ամենամյա երիտասարդական մրցանակաբաշխություն:
- Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամներով հաճախակի այցելել մարզի հատուկ խնամքի կենտրոններ, գիշերօթիկ դպրոցներ, ծանոթանալ տիրող իրավիճակին:

- Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամների համար կազմակերպել համատեղ միջոցառումներ և ճանաչողական էքսկուրսիաներ մարզի տարածքում:

#### Հանձնարարվեց՝

- Մինչև հաջորդ նիստը նախատեսել համայնքներում երիտասարդական կենտրոնների գործունեության վայրերը, մշակել երիտասարդական կենտրոնների գործունեության նախնական մոդելներ:
- Լոռու մարզի համայնքների երիտասարդության միջև կապ և համագործակցություն հաստատելու նպատակով մշակել մարզային երիտասարդական կոնկրետ ծրագրեր:
- Մարզային ամենամյա երիտասարդական մրցանակաբաշխություն իրականացնելու համար առանձնացնել անվանակարգեր և մշակել մրցանակաբաշխության կարգ:

Նիստն արձանագրեց Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի քարտուղար Նազելի Ավագյանը (+37495405081)

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ